



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 7

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2019 Թ. ՄԱՐՏԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում (զեկ. Ա. Սարգսյան):
2. Հեռակա ուսուցման դասերը սկսվելու հետ կապված հարցերի քննարկում:
3. Դպրոցական օլիմպիադայի երկու փուլերի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում (զեկ. Ա. Գալստյան):
4. Համալսարանի 100-ամյակի միջոցառումների և ԵՊՀ-ի աշխատանքների կատարելագործման հետ կապված խնդիրների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն քվեարկությամբ:

Օրակարգի 1-ին՝ 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման **հարցի** մասին զեկուցեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես ասաց, որ 2018-19 ուստարվա 1-ին կիսամյակի լուծարքային շրջանն անցկացվել է բնականոն կերպով, չեն նկատվել խախտումներ կամ բողոքներ, և արդյունքները բավարար են:

Հաջորդ հաղորդումը (հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյան) նվիրված էր **օրակարգի 2-րդ՝** հեռակա ուսուցման դասերը սկսվելու հետ կապված հարցերի քննարկմանը: Նկատվեց, որ ժամանակին նախապատրաստվել է դասացուցակը, այսօրվանից արդեն սկսվել են հեռակա ուսուցման դասընթացները, և անհրաժեշտ է հետևել դրանց կանոնավոր անցկացմանը, քանի որ այս տարի հատկացված ժամանակը բավական խտացված է:

Օրակարգի 3-րդ հարցի առիթով (դպրոցական օլիմպիադայի երկու փուլերի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում) ելույթ ունեցավ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Գալստյանը: Իր խոսքում նա ընդգծեց, որ դպրոցական օլիմպիադայի անցկացման երկու փուլերի համար էլ համապատասխան ամբիոնների վարիչների հսկողությամբ ու հաստատմամբ արդեն պատրաստ են քննական թեստերը, պատասխանների համար նախատեսված հատուկ՝ բավական պարզեցված թղթերը, և հանձնաժողովը կջանա, որ դպրոցական օլիմպիադայի երկու փուլերն էլ անցկացվեն պատշաճ մակարդակով:

Գիտական խորհրդի նիստի **օրակարգի 4-րդ հարցը** նվիրված էր **Համալսարանի 100-ամյակի միջոցառումների և ԵՊՀ-ի աշխատանքների կատարելագործման հետ կապված հարցերին:**

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, Ա. Աբաջյանը, Ժ. Քալանթարյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Տեր-Մինասյանը, Ա. Հայրապետյանը, Ն. Դիլբարյանը, Թ. Տոնոյանը, ուսանողներ Հովհ. Հովակիմյանը, Ա. Մկրյանը և այլք:

Ելույթ ունեցող ամբիոնի վարիչներն ամենից առաջ հանգամանալից ներկայացրին Երևանի պետական համալսարանի 100-ամյակի միջոցառումների իրենց ծրագրերը (հոբել-

յանական ժողովածուներ՝ հայ բանասիրության ֆակուլտետի պատմություն, «Չարենցյան ընթերցումներ» տասը հատորների լույսընծայում մեկ գրքով, զանազան ալբոմներ, գիտական նստաշրջաններ՝ «Մաթևոսյանական ընթերցումներ», «Աբեղյանական ընթերցումներ»...) և վստահություն հայտնեցին, որ իրենց ձեռնարկները կարժանանան ռեկտորատի հավանությանն ու աջակցությանը:

Քննարկվող հարցի երկրորդ մասի վերաբերյալ ելույթ ունեցողները հանդես եկան մի շարք առաջարկներով. ծավալվեց մտքերի քննարկում, հնչեցին զանազան կարծիքներ, և ընդունվեց որոշում՝ այդ առաջարկները ներկայացնել ռեկտորատ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն –

Ա. ՀԱՄԱՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

1. Պետական համալսարանը պետք է ունենա պետական լայն աջակցությունը, որը պետք է արտահայտվի նախ և առաջ մեծ ֆինանսավորումներով: Դիմել իշխանական մարմիններին՝ այդ ֆինանսավորումը ապահովելու համար:

2. Բացել համալսարանին կից հումանիտար քոլեջ, որի շրջանավարտները համալսարան կրնան դառնալ որոշակի արտոնություններով:

3. Դիմել ՀՀ կառավարությանը՝ բացառության կարգով, իբրև հայագիտության ֆակուլտետ, ավելացնել հայ բանասիրության ֆակուլտետ ընդունվող դիմորդների անվճար ուսուցման տեղերը՝ հասցնելով նախկին 40-ին:

4. Արտերկրի հայ համայնքների հետ իրականացնել ուսանողների փոխանակման ծրագիր:

5. Սահմանափակել համալսարանի զանազան պաշտոնատար անձանց գործուղումները՝ հնարավորություն տալով դրանցից օգտվելու նաև ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմին:

6. Վերանայել վարչական և տեսչական կազմի գործառույթները, սահմանափակել դասատուներ անցկացնող տեսուչների հաստիքները՝ նրանց պարտականությունները դնելով փոխդեկանների և դեկանատների վրա:

7. Դիմել ՀՀ կառավարություն և Ազգային ժողով՝ անհամաձայնություն հայտնելով ՀՀ կրթության և գիտության մասին օրենքի նախագծում տեղ գտած՝ բուհերում դասա-

վանդող դասախոսների տարիքային սահմանափակումների վերաբերյալ: Ընդունելի համարել պաշտոնների զբաղեցման մինչև 70 տարեկան տարբերակը: Անհնար և անհեթեթ համարել 70 տարեկան դասախոսներին միայն 0.5 դրույք ծանրաբեռնելու առաջարկը. դասախոսությունը ո՛չ մարզադաշտում վազել է և ո՛չ էլ շինարարությունում բետոն թափել: Գիտական կարողությունը և ունակությունը պետք է լինի չափանիշը և ոչ թե տարիքը:

8. 15-20%-ով բարձրացնել աշխատավարձը՝ դրույքաչափերն էլ իջեցնելով 60-100 ժամով: Եթե չհատկացվեն դրամական համապատասխան միջոցներ, ապա ամեն բան կլինի անարդյունք:
9. Հաստատել հստակ չափանիշներ դասախոսական կազմի ատեստացիա անցկացնելու համար: Այդ չափանիշների մեջ ներառել նաև դասալսումների և ուսանողական սոցիալացման արդյունքները, գիտական աշխատանքները:
10. ՈԲՖ դասընթացները դարձնել ոչ պարտադիր: Առաջին հնգամյակը ցույց տվեց, որ դասընթացների զգալի մասը (անգլերեն, մասնագիտության արդի խնդիրներ և այլն) էական արդյունավետություն չունի: Դասախոսները գերծանրաբեռնվածության պատճառով չեն հասցնում մասնակցել դասընթացներին հարկադիր կրեդիտները հավաքելու համար:
11. Վերականգնել գիտական աշխատանքների վճարման նախկին՝ տարակարգված ձևը:
12. Գիտաժողովների ժողովածուներում տպագրված գեկուցում-հոդվածները ներառել վճարվող աշխատանքների մեջ:
13. Համալսարանը պետք է ընդլայնի, ավելի ճիշտ, ստեղծի հավելավճարի ենթակա պարբերականների իր ցուցակը, ոչ թե ուղղակի կախման մեջ հայտնվի ՀՀ ԲՈԿ-ի քայլերից:
14. Ձեռնարկները և ուսումնամեթոդական աշխատանքները ներառել վճարվող աշխատանքների մեջ:
15. Վերականգնել լուծարքները գնահատելու նախկին ձևը: Լուծարքի առաջին գրավորով բավարար միավոր ստացած ուսանողին թույլ չտալ երկրորդ աշխատանքը գրել: Ներկայումս գործող կարգով բավարար առաջադիմություն ունեցող ուսանողը կարո-

դանում է լուծարքով էապես բարձրացնել նիշը և գերազանցել առանց լուծարքի համեմատաբար բարձր միավոր ստացած ուսանողի արդյունքը: Այս եղանակը էապես խախտում է իրավահավասար պայմանները:

16. Թույլատրել բացել մագիստրոսական փոքր խմբեր (սկսած երկու ուսանողից)՝ դրանով նպաստելով տվյալ գիտաճյուղի զարգացմանն ու շարունակականությանը:
17. Վերականգնել մագիստրոսական թեզերի գրախոսման նախկին կարգը: ԵՊՀ յուրաքանչյուր ֆակուլտետ և ստորաբաժանում ունի անհրաժեշտ մասնագիտական ներուժ՝ դրանց գնահատումը պատշաճ կազմակերպելու համար: Վերականգնել իջեցված՝ կուրսային, ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզերին, միջանկյալ քննություններին հատկացվող ժամաքանակը, որովհետև դա ուղղակի բխում է ուսանողների և դասախոսների շահերից:
18. Համալսարանի կողմից տպագրված գրքերի վաճառքը կազմակերպել նաև այլ գրախանութներում:
19. Ֆակուլտետին հատկացնել մասնագիտական անհրաժեշտ գրականություն, որի ցանկը վաղուց ներկայացվել է, բայց դեռևս գրքեր չեն ստացվել:
20. Դիմել ՀՀ կառավարությանը՝ ռեկտորի ընտրությունը կազմակերպելու ոչ թե հոգաբարձուների խորհրդի կողմից, այլ մայր բուհի պրոֆեսորադասախոսական ամբողջ անձնակազմի փակ-գաղտնի քվեարկությամբ:
21. Պրոռեկտորների պաշտոնների համար ևս կազմակերպել համահամալսարանական փակ-գաղտնի քվեարկություններ:
22. Սատարել դոկտորանտուրայի աշխատանքներին, թեկնածու անձին վճարել առնվազն կես աշխատավարձ.
23. Առնվազն երկու անգամ բարձրացնել ուսանողությանը տրվող կրթաթոշակը:
24. Շտապ կարգով մշակել նախագիծ, որը կկարգավորի մագիստրատուրան ավարտած շրջանավարտների առավելություններն ու իրավունքները:

Բ. ՆԵՐՏԱԿՈՒԼՏԵՍԱՅԻՆ

1. Հայ բանասիրության ֆակուլտետում որոշակի լսարաններ ապահովել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, համացանցով: Առանձնացնել բանավեճի, մասնագիտական քննարկումների առանձին սենյակ:
2. Ուսուցումը մագիստրատուրայում դարձնել 1.5 տարի՝ 10-15%-ով նվազեցնելով նաև վարձավճարը:
3. Անընդհատ արդիականացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերը, հանձնարարել ֆակուլտետի մեթոդխորհրդին՝ ըստ հարկի քննարկել դրանք:
4. Ֆակուլտետը համալրել երիտասարդ և ունակ կադրերով:
5. Հրատապ է ֆակուլտետում ձայնագրման և ձայնալսման հատուկ կաբինետի բացումը, որի շնորհիվ լեզուների ուսուցումը հնարավոր կլինի հասցնել բարձր մակարդակի:
6. Ֆակուլտետի ամբիոններն ապահովել առանձին պրոյեկտորով, որովհետև անհնար է մեկ-երկու սարքով ապահովել դասախոսությունների ժամանակակից ընթացքը: Ֆակուլտետներում առկա տեխնիկական միջոցները հին են և կարիք ունեն նորերով փոխարինել:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Նոանե Բաբկենի Սարոյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Ելույթ ունեցողն էչը նկատեցին, որ հաշվի առնելով տեսական խնդիրների նորովի ուսումնասիրության անհրաժեշտությունը և ամբիոնի կողմից առաջադրված թեմայի՝ «Բա-

նաստեղծական կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում» արդիականությունը՝ պետք է հավանություն տալ թեմայի ընտրությանը: Այդ թեման, քննարկման մասնակիցների կարծիքով, հնարավորություն է տալիս հայ պոեզիայի բանաստեղծական փոքր կայուն ձևերը քննել տեսական նոր ըմբռնումների և համաշխարհային գրական զարգացումների համատեքստում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն –

1. Հաստատել գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ **ՆՊԱՆԷ ԲԱՐԿԵՆԻ ՍԱՐԴՅԱՆԻ** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Բանաստեղծական փոքր կայուն ձևերի առանձնահատկությունները հայ պոեզիայում (քառյակ, թանկա, հոքքու)»՝ Ժ.01.02.- «Նորագույն շրջանի հայ գրականություն և գրականության տեսություն» մասնագիտությամբ:

2. Գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աստղիկ Սարգսի Բեքմեզյանին**:

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ